

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Արցախի ներդրումային հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի
10/07/2009թ. թիվ 14 որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկում
04/08/2009թ. թիվ 233 Ա որոշմամբ

ՓՈՓՈՒՏՎԱԾ Է

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
07/09/2020թ. թիվ 07 որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ՝
Էռնեստ Գրիգորյան

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
Մարտին Գալստյան



Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

**«ՖԻԴԵՍ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

(նոր խմբագրություն)



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (ստորև՝ Հիփոթեքային ընկերություն) իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա և համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի և սույն Կանոնադրության՝ իրավունք ունի իրականացնել վարկային կազմակերպության գործունեություն:
- 1.2 Հիփոթեքային ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում Արցախի ներդրումային հիմնադրամը (հասցե՝ Տիգրան Մեծի 37/22, ք. Ստեփանակերտ, ԱՀ):
- 1.3 Հիփոթեքային ընկերության պաշտոնական լրիվ ֆիրմային անվանումն է.
Հայերեն՝ «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն
Անգլերեն՝ “Fides Mortgage Company” Universal Credit Organisation Closed Joint Stock Company
Ռուսերեն՝ “Фидес ипотечная компания” универсальная кредитная организация закрытое акционерное общество
Հիփոթեքային ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է.
Հայերեն՝ «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ
Անգլերեն՝ “Fides Mortgage Company” UCO CJSC
Ռուսերեն՝ “Фидес ипотечная компания” УКО ЗАО.
- 1.4 Հիփոթեքային ընկերության իրավաբանական հասցեն է՝
Նաիրի Զարյան 17ա, ք. Երևան, 0051, Հայաստանի Հանրապետություն
- 1.5 Հիփոթեքային ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք: Վերջինս պարունակում է Հիփոթեքային ընկերության ֆիրմային անվանումը հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:
- 1.6 Հիփոթեքային ընկերությունը հիմնադրված է անորոշ ժամկետով:
- 1.7 Հիփոթեքային ընկերությունը, որպես սեփականություն, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք և պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ստանձնել պարտավորություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:
- 1.8 Հիփոթեքային ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Հիփոթեքային ընկերության պարտավորությունների համար: Հիփոթեքային ընկերության պարտավորությունների համար նրա բաժնետերերը պատասխանատվություն են կրում իրենց պատկանող բաժնետոմսերի անվանական արժեքի սահմաններում:



2. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1 Հիփոթեքային ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները կամ դրանց մի մասը՝
- 1) ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,
 - 2) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
 - 3) տրամադրել երաշխիքներ,
 - 4) իր անունից թողարկել և տեղաբաշխել՝
 - առանց ապահովման պարտատոմսեր՝ Հիփոթեքային ընկերության կանոնադրական հիմնադրամը չգերազանցող գումարի չափով,
 - երրորդ անձանց կողմից տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր, որոնց առնվազն երեսուն տոկոսը պետք է ապահովված լինի միջազգային կազմակերպությունների, ըստ Ստանդարտ և Փուրգ, Ֆիթչ կամ Մուդիզ վարկանշային գործակալությունների տրամադրած վարկանիշների՝ ԱԱԱ (Աաա)-ից ԲԲԲ-(Բաա3) վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի կամ այլ կազմակերպությունների կողմից,
 - 5) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,
 - 6) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
 - 7) գնել, վաճառել և կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ծուլակտորներ և մետաղադրամ,
 - 8) գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
 - 9) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
 - 10) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
 - 11) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
 - 12) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
 - 13) Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ,
 - 14) կանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ՝ միայն այն դեպքերում, երբ արտարժույթի առուվաճառքն անհրաժեշտ է Հիփոթեքային ընկերության կողմից տրամադրված վարկերի մարումները սպասարկելու համար և մարման համար անհրաժեշտ չափով:
- 2.2 Հիփոթեքային ընկերությունը հրապարակային օֆերտաների միջոցով փոխառություններ չի ներգրավում:



2.3 Սույն հոդվածով սահմանված բոլոր գործառնությունների հետ կապված վճարումներն իրականացվում են կանխիկ և/կամ անկանխիկ եղանակով:

3. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

- 3.1 Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 148 000 000 (մեկ միլիարդ հարյուր քառասունութ միլիոն) ՀՀ դրամ:
- 3.2 Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 114 800 (մեկ հարյուր տասնչորս հազար ութ հարյուր) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերը լրիվ վճարված են և ձեռք են բերվել Հիփոթեքային ընկերության միակ հիմնադիր Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից:
- 3.3 Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը համալրվում, այդ թվում՝ բաժնետոմսերի դիմաց վճարումները կատարվում են բացառապես ՀՀ դրամով, բացառությամբ Հիփոթեքային ընկերության վերակազմակերպման դեպքի, երբ կանոնադրական կապիտալի վճարումը և ավելացումը կարող է կատարվել բաժնետոմսերի փոխարկման միջոցով:
- 3.4 Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:
- 3.5 Հիփոթեքային ընկերությունը իր գործունեության ֆինանսական արդյունքերն ամփոփելուց հետո կարող է բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը՝ շահույթի մի մասը փոխացնելով կանոնադրական կապիտալ:
- 3.6 Հիփոթեքային ընկերության կանոնադրական կապիտալը կարող է նվազեցվել միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ, ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1 Հիփոթեքային ընկերությունը կարող է լրացուցիչ թողարկել հասարակ (սովորական) բաժնետոմսեր:
- 4.2 Հիփոթեքային ընկերությունը արտոնյալ բաժնետոմսեր չի թողարկելու:
- 4.3 Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:
- 4.4 Հիփոթեքային ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը օրենսդրության և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
 - 1) մասնակցել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ժողովներում հանդես գալ առաջարկություններով և քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
 - 2) մասնակցել Հիփոթեքային ընկերության կառավարմանը,



- 3) ստանալ շահութաբաժիններ՝ Հիփոթեքային ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
 - 4) առաջնահերթ կարգով ձեռք բերել Հիփոթեքային ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,
 - 5) ստանալ Հիփոթեքային ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին,
 - 6) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
 - 7) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
 - 8) Հիփոթեքային ընկերության լուծարման դեպքում ստանալ ընկերության գույքի իր հասանելիք մասը,
 - 9) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:
- 4.5 Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի անվճար ստանալ Հիփոթեքային ընկերության վերջին տարեկան հաշվետվության և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացության պատճենները:
- 4.6 Հիփոթեքային ընկերության յուրաքանչյուր բաժնետեր իրավունք ունի ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին և օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթղթերին, ինչպես նաև անվճար ստանալ այդ փաստաթղթերի պատճենները բաժնետիրոջ գրավոր դիմումի հիման վրա՝ դիմումը Հիփոթեքային ընկերություն ներկայացնելու պահից հինգ օրվա ընթացքում:
- 4.7 Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի համախմբել (կոնսոլիդացնել) տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի (դասի) մեկ նոր բաժնետոմսի:
- 4.8 Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի բաժանել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխած մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի (դասի) երկու կամ ավելի բաժնետոմսերի:
- 4.9 Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում է մասնագիտացված կազմակերպության կողմից:

5. ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- 5.1 Բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում Հիփոթեքային ընկերության բաժնետերերն օգտվում են կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համամասնորեն տեղաբաշխվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքից, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- 5.2 Բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ Հիփոթեքային ընկերության բաժնետերերը գրավոր ծանուցվում են նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին: Ծանուցումը պետք է պարունակի օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ:



- 5.3 Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը ամբողջ ծավալով կամ մասնակիորեն՝ բաժնետոմսերի ձեռքբերման մասին Հիփոթեքային ընկերությանը գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկություններ: Ընդ որում, ծանուցումը պետք է ներկայացվի բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:
- 5.4 Եթե Հիփոթեքային ընկերության որևէ բաժնետեր օտարում է իր բաժնետոմսերը, ապա Հիփոթեքային ընկերության մյուս բաժնետերերը օգտվում են վաճառվող բաժնետոմսերն իրենց բաժնեմասին համամասնորեն ձեռք բերելու նախապատվության իրավունքից՝ այդ բաժնետոմսերի իրացման մասին գրավոր ծանուցվելու պահից վաթսուն օրացուցային օրվա ընթացքում: Եթե բաժնետիրոջ կողմից վաճառվող բաժնետոմսերը՝ գնելու առաջարկի պահից վաթսուն օրացուցային օրվա ընթացքում ձեռք չեն բերվել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի կողմից, ապա Հիփոթեքային ընկերությունն իրավունք ունի ձեռք բերել այդ բաժնետոմսերը: Հիփոթեքային ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու կամ դրանց գնի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում վաճառվող բաժնետոմսերի սեփականատերը կարող է առաջարկել դրանք երրորդ անձանց՝ իր կողմից սահմանված պայմաններով (սակայն ոչ ավելի բարենպաստ պայմաններով, քան սահմանված են եղել բաժնետերերի համար):

6. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1 Հիփոթեքային ընկերության կառավարման մարմիններն են՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողովը,
- Խորհուրդը,
- Վարչությունը,
- Գործադիր տնօրենը:

7. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

- 7.1 Հիփոթեքային ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Բաժնետերերի ընդհանուր ժողովն է:
- 7.2 Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
- 7.3 Անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող է գումարվել բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է անցկացվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:
- Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Քվեաթերթիկներն ուղարկվում են բաժնետերերին պատվիրված նամակով կամ հանձնվում են անձամբ կամ ուղարկվում են էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և



հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որը նաև համարվում է ընդհանուր ժողովի մասին ծանուցում:

Հեռակա քվեարկությամբ անցկացվող ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Հիփոթեքային ընկերության՝ ձայնի իրավունք տվող տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Հիփոթեքային ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն երեսուն օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ: Բաժնետերերը լրացված քվեաթերթիկները ուղարկում են Հիփոթեքային ընկերություն էլեկտրոնային կամ փոստային եղանակով:

7.4 Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստում, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա քվեարկությամբ անցկացված նիստ չի համարվում:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում անցկացվող ընդհանուր ժողովի վերաբերյալ ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրության 7.11.-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

7.5 Բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

- 1) Հիփոթեքային ընկերության բաժնետերերը,
- 2) Հիփոթեքային ընկերության գործադիր տնօրենը, Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,
- 3) Հիփոթեքային ընկերության վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարը և անդամները կամ վերստուգողը՝ որպես դիտորդ,
- 4) Հիփոթեքային ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունը առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),
- 5) օրենքով նախատեսված այլ անձինք:

7.6 Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է Հիփոթեքային ընկերության խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Հիփոթեքային ընկերության մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Հիփոթեքային ընկերության մասնակիցների ցուցակը ծանոթացման համար տրամադրվում է Հիփոթեքային ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են ընկերության բաժնետոմսերի առնվազն տասը տոկոսին: Հիփոթեքային ընկերության բաժնետիրոջ պահանջով Հիփոթեքային ընկերությունը պարտավոր է նաև նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:

7.7 Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում.



- ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
 - բ) Հիփոթեքային ընկերության վերակազմակերպումը,
 - գ) Հիփոթեքային ընկերության լուծարումը,
 - դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
 - ե) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
 - է) օրենքով սահմանված դեպքերում կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
 - ը) վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 - թ) Հիփոթեքային ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - ժ) Հիփոթեքային ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
 - ժա) օրենքով սահմանված դեպքերում Հիփոթեքային ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (Հիփոթեքային ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50%-ից ավելին),
 - ժբ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Հիփոթեքային ընկերության այլ արժեթղթերի Հիփոթեքային ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
 - ժգ) Հիփոթեքային ընկերության գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում,
 - ժդ) Հիփոթեքային ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետ գնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում,
 - ժե) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,
 - ժզ) Հիփոթեքային ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում: Հիփոթեքային ընկերության Խորհրդի անդամների ընտրության հարցը արտահերթ ընդհանուր ժողովներում կարող է քննարկվել, եթե Հիփոթեքային ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
 - ժէ) Սույն Կանոնադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ՝ հաստատված օրակարգի շրջանակներում:
- 7.8 Վերը թվարկված լիազորությունները հանդիսանում են բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունը:



- 7.9 Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Հիփոթեքային ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի հիսունից ավելի տոկոսին:
- 7.10 Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումներն ընդունվում են քվեարկելու իրավունք ունեցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ ստորև շարադրված հարցերի.
- սույն Կանոնադրության 7.7-րդ կետի ա), բ), դ), ե) և ժա) ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով.
 - սույն Կանոնադրության 7.7-րդ կետի գ) և է) ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
- 7.11 Բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումը՝ էլեկտրոնային և/կամ փոստային եղանակով՝ պետք է ուղարկվի ընդհանուր ժողովից առնվազն յոթ օր առաջ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման համար բաժնետերերի ծանուցման առավել կարճ ժամկետ կարող է սահմանվել, եթե այդ մասին բաժնետերերի միջև համաձայնություն է կայացվել:
- 7.12 Ձայնի իրավունք սովոր բաժնետոմսերի առնվազն երկու տոկոսի սեփականատերն իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ: Բաժնետերերի առաջարկված հարցերն ընդգրկվում են ընդհանուր ժողովի օրակարգում: Ընդհանուր ժողովը չի քննարկում հարցեր, որոնք օրակարգում ընդգրկված չեն:
- 7.13 Քվեարկությունը Բաժնետերերի ընդհանուր ժողովում իրականացվում է «ձայնի իրավունք սովոր մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:
- 7.14 Հիփոթեքային ընկերության բաժնետերերը Բաժնետերերի ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ գրավոր ձևով լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետերերը կարող են լիազորություն տալ նաև այլ բաժնետերերի՝ ընդհանուր ժողովում իրենց անունից հանդես գալու համար:
- 7.15 Բաժնետերերի ընդհանուր ժողովներն արձանագրվում են: Ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից հինգ օրվա ընթացքում՝ երկու օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

8. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- 8.1 Հիփոթեքային ընկերության Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, օրենքով և սույն Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում:
- 8.2 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,



- բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ այն դեպքի, երբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, որի դեպքում արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք և արտահերթ ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու ժողովի գումարման հետ կապված ծախսերը՝ Ընկերության միջոցների հաշվին,
- գ) ժողովների օրակարգի հաստատումը,
- դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը,
- ե) սույն Կանոնադրության 7.7-րդ կետի «բ», «ժա», «ժբ», «ժգ», «ժդ», «ժե» «ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը,
- զ) Հիփոթեքային ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը,
- է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
- ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով,
- թ) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
- ժ) Հիփոթեքային ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, տնօրենի (գործադիր տնօրենի), վարչության, անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը,
- ժա) Հիփոթեքային ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
- ժբ) Հիփոթեքային ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
- ժգ) Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
- ժդ) Հիփոթեքային ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
- ժե) Հիփոթեքային ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- ժզ) Հիփոթեքային ընկերության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,
- ժէ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը,
- ժը) Հիփոթեքային ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը,
- ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը,



- ի) Հիփոթեքային ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (Հիփոթեքային ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50%-ի չափով),
- իա) Հիփոթեքային ընկերության գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում,
- իբ) Հիփոթեքային ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- իգ) Հիփոթեքային ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- իդ) Հիփոթեքային ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
- իե) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:
- 8.3 Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերի լուծումը չեն կարող փոխանցվել Հիփոթեքային ընկերության կառավարման այլ մարմնի կամ անձի:
- 8.4 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 8.5 Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:
- 8.6 Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
- 8.7 Հիփոթեքային ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տասը և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցիչ:
- 8.8 Եթե խորհրդի անդամներն ընտրված են գումարային (կումուլյատիվ) քվեարկությամբ, ապա ժողովի՝ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը կարող է ընդունվել միայն խորհրդի բոլոր անդամների վերաբերյալ:
- 8.9 Խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք անդամից պակաս լինել: Սույն կետով սահմանված սահմանափակումը չի տարածվում այն անձանց վրա, որոնք սույն Կանոնադրության 8.7-րդ կետին համապատասխան իրավունք ունեն ընդգրկվել խորհրդի կազմում առանց ընտրության:
- 8.10 Խորհրդի անդամ կարող է լինել Ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը:
- 8.11 Ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:
- 8.12 Խորհրդի անդամների նկատմամբ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով կարող են նախատեսվել նաև այլ սահմանափակումներ և պահանջներ:
- 8.13 Ժողովի որոշմամբ խորհրդի անդամների համար կարող է սահմանվել պարզևավճար և (կամ) փոխհատուցում նրանց այն ծախսերի դիմաց, որոնք կապված են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Պարզևավճարի և (կամ) փոխհատուցման չափն ու վճարման կարգը սահմանվում են ժողովի որոշմամբ:
- 8.14 Խորհրդի նախագահը՝
ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,



- բ) գումարում է խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք,
 - գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,
 - դ) նախագահում է ժողովներում:
- 8.15 Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց պահանջով:
- 8.16 Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից հաստատված խորհրդի կանոնակարգով:
- 8.17 Խորհուրդը կարող է նաև հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
- 8.18 Խորհրդի նիստերը իրավազոր են (քվորումն ապահովվում է) եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Եթե խորհրդի անդամների թիվը նվազում է կանոնադրությամբ սահմանված թվի կեսից, ապա Ընկերությունը պետք է այն լրացնելու նպատակով արտահերթ ժողով գումարի, որի մասին որոշումը կայացնում է խորհուրդը: Այդ, ինչպես նաև ժողովի գումարմամբ պայմանավորված այլ որոշումներից բացի, խորհուրդն այլ որոշումներ ընդունելու իրավունք չունի:
- 8.19 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:
- 8.20 Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
բ) նիստին ներկա անձինք,
գ) նիստի օրակարգը,
դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
ե) նիստում ընդունված որոշումները:
- 8.21 Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

- 9.1 Հիփոթեքային ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը՝ Գործադիր տնօրենը և Վարչությունը:
- 9.2 Հիփոթեքային ընկերության Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են գործադիր տնօրենը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը: Գործադիր տնօրենը ի պաշտոնե հանդիսանում է Վարչության նախագահ:
- 9.3 Հիփոթեքային ընկերության Գործադիր տնօրենը նշանակվում է Հիփոթեքային ընկերության խորհրդի կողմից, իսկ Գործադիր տնօրենի տեղակալ(ներ)ը, գլխավոր հաշվապահը և Վարչության այլ անդամներ՝ Հիփոթեքային ընկերության խորհրդի կողմից՝ Գործադիր տնօրենի ներկայացմամբ:



- 9.4 Վարչությունը գործում է սույն Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Հիփոթեքային ընկերության վարչության կանոնակարգի և այլ ակտերի հիման վրա, որոնք սահմանում են վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև վարչության կողմից որոշումների ընդունման կարգը:
- 9.5 Հիփոթեքային ընկերության Վարչությունը.
- ա) ապահովում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
 - բ) սահմանում է Հիփոթեքային ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագները,
 - գ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիփոթեքային ընկերության ներքին իրավական ակտերը, դրանցում կատարվելիք փոփոխությունները,
 - դ) Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիփոթեքային ընկերության ծառայությունների նոր տեսակները և նոր գործառնությունների ու գործունեության իրականացման կարգը՝ սույն Կանոնադրությամբ նախատեսված շրջանակներում, ի նպաստ Հիփոթեքային ընկերության նպատակների իրագործման,
 - ե) հաստատում է Հիփոթեքային ընկերության պայմանագրերի օրինակելի ձևերը,
 - զ) իրականացում է սույն Կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված վարչության կանոնակարգի և այլ իրավական ակտերի շրջանակներում նախատեսված Հիփոթեքային ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
- 9.6 Վարչության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Վարչության նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին (անձնական մասնակցությամբ կամ հեռակա քվեարկության ձևով): Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ վարչության յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը որոշիչ է:
- 9.7 Վարչության նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, վերստուգիչ հանձնաժողովին (վերստուգողին), արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունները կազմվում են նիստի ավարտից հետո՝ 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
- ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 - բ) նիստին ներկա անձինք,
 - գ) նիստի օրակարգը,
 - դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
 - ե) նիստում ընդունված որոշումները:
- 9.8 Վարչության նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:
- 9.9 Վարչության նիստերը կազմակերպում և վարում է վարչության նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:



10. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

- 10.1 Գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից: Հիփոթեքային ընկերության մյուս ղեկավարները նշանակվում են գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:
- 10.2 Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն Կանոնադրությամբ չեն հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի, վարչության, վերստուգիչ հանձնաժողովի /վերստուգողի/ կամ գլխավոր հաշվապահի իրավասությունը:
- 10.3 Գործադիր տնօրենը՝
- ա) Հիփոթեքային ընկերությունը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական կազմակերպություններում, դատական և այլ մարմիններում,
 - բ) տնօրինում է Հիփոթեքային ընկերության գույքը և ֆինանսական միջոցները, գործարքներ և պայմանագրեր է կնքում Հիփոթեքային ընկերության անունից,
 - գ) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիփոթեքային ընկերության աշխատողներին, կնքում է աշխատանքային պայմանագրեր,
 - դ) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,
 - ե) իրականացնում է օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
- 10.4 Գործադիր տնօրենի բացակայության ժամանակ գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է գործադիր տնօրենի տեղակալը կամ վարչության անդամը:

11. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԱՄ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

- 11.1 Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Հիփոթեքային ընկերության վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող): Վերստուգիչ հանձնաժողովը հետևում է Հիփոթեքային ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Հիփոթեքային ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու սույն Կանոնադրությանը:
- 11.2 Վերստուգիչ հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն Կանոնադրությամբ և գործող օրենսդրությամբ և ընկերության ներքին իրավական ակտերով:
- 11.3 Վերստուգիչ հանձնաժողովն իրականացնում է Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի որոշմամբ, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն տասը տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:



- 11.4 Վերստուգիչ հանձնաժողովի պահանջով նրան պետք է ներկայացվեն Հիփոթեքային ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:
- 11.5 Վերստուգիչ հանձնաժողովի անդամներին ընտրում է ժողովը՝ երեք տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամների վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ կարող է լինել Հիփոթեքային ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:
- 11.6 Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է ժողովին: Օրենքների և այլ իրավական ակտերի խախտումներ հայտնաբերելու դեպքում վերստուգիչ հանձնաժողովի ղեկավարը կամ վերստուգողը ժողովին է ներկայացնում հաշվետվություն՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

12. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

- 12.1 Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
- 12.2 Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Հիփոթեքային ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Հիփոթեքային ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 12.3 Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է խորհրդի կողմից՝ ընկերության գործադիր տնօրենի ներկայացմամբ:
- 12.4 Հիփոթեքային ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր տնօրենին, վերստուգողին կամ այլ անձի:

13. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ և ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 13.1 Հիփոթեքային ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս հիմնել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:



14. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 14.1 Հիփոթեքային ընկերությունը հաշվապահական հաշվառումը վարում է ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորված մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ հաշվապահական հաշվառման ստանդարտներին և գործող օրենսդրության համապատասխան:
- 14.2 Հիփոթեքային ընկերությունը ՀՀ ԿԲ սահմանած կարգով և ժամկետներում կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած այլ հաշվետվություններ:
- 14.3 Հիփոթեքային ընկերության ֆինանսական տարին համընկնում է օրացուցային տարվա հետ:
- 14.4 Հիփոթեքային ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները ենթակա են նախնական հաստատման Ընկերության խորհրդի կողմից բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:
- 14.5 Հիփոթեքային ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը: Ընկերությունը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը (տասնհինգը):
- 14.6 Հիփոթեքային ընկերությունը ստեղծում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահուստային հիմնադրամներ:
- 14.7 Հիփոթեքային ընկերության զուտ շահույթը կարող է օգտագործվել շահութաբաժինների վճարման, Հիփոթեքային ընկերության գործունեության և պահուստային հիմնադրամին կատարվող մասհանումների նպատակով:
- 14.8 Հիփոթեքային ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթի և վնասների հաշվետվության հաստատման ժամանակ Հիփոթեքային ընկերության վերստուգողի և արտաքին աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը պարտադիր է:

15. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

- 15.1 Յուրաքանչյուր տարի Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Հիփոթեքային ընկերությունը ներգրավում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:
- 15.2 Հիփոթեքային ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին նշանակում է Հիփոթեքային ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, իսկ նրա վճարման չափը սահմանում է Հիփոթեքային ընկերության խորհուրդը:



- 15.3 Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացվել նաև Հիփոթեքային ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5(հինգ) տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում Հիփոթեքային ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում և վճարումը կատարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում՝ նրանք կարող են Հիփոթեքային ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե ստուգման արդյունքում բացահայտվել են Հիփոթեքային ընկերության ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող էական խախտումներ:
- 15.4 Հիփոթեքային ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսվի աուդիտորական եզրակացության, աուդիտորական հաշվետվության կազմում, ինչպես նաև Հիփոթեքային ընկերության կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

16. ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 16.1 Հիփոթեքային ընկերությունը կարող է լուծարվել օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:
- 16.2 Հիփոթեքային ընկերության ինքնալուծարումն իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 16.3 Լուծարային հանձնաժողովն ընտրվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ առնվազն երեք անդամի կազմով:
- 16.4 Պարտատերերի հանդեպ ունեցած պարտավորությունների մարումից հետո մնացած լուծարային միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ նրանց բաժնեմասին համամասնորեն: